

Կ Ա Ս Ս Ա Ն Դ Ր Ա

(Kassandra)

Շ Ի Լ Լ Է Ր Ի Ց

Տրովայի յարկերում կար մեծ խնդութիւն՝
Մինչ կանգուն էր դեռ բերդը բարձրամուր-
Մի տեղ հարսանիք, պարեր ու կայթիւն,
Միւսում քնարի ծայներ քաղցրալուր,
Ամէն ով որ կայ՝ քրտինքը ճակտին՝
Արտսունքոտ կոուից առնում է դադար-
Պրիւս արքայի գեղեցիկ դուստրին
Պելիսեանն հարս է տանում իր համար:

Եւ դափնեպսակ գնում են կառքերն
Իրար ետեւից մեծ հանդէս սարքած՝
Երկնայինների սրբազան յարկերն,
Ուր եւ թիւքրացու բազինն էր կանգնած:
Խուլ մոնչիւնով բաքոսեանների
Հեշտանքն անցնում է փողոցէ փողոց,
Մինչ արհամարհուած, տխուր, եղկելի
Կար միայն Մի կուրծք, որ ունէր բիւր խոց:

Զուրկ խնդութիւնից խնդութեան գրկում,
Մնացած մենակ, առանց ընկերի,
Գնում էր լռիկ Կասսանդրան տրտում
Դափնեաց անտառը Ապոլոն վեհի,
Հագիւ թէ հասաւ մարգարէութիւն
Անտառի խորը, սաստիկ զայրոյթով
Իր ապարօշը շարտեց գետին,
Այսպէս սրտառուէ բողոք բառնալով:

«Ամէն դուռ բաց է խնդութեան համար,
 «Ամէնքն երջանիկ զգում են իրանց,
 «Ժերով ծնողներս յոյս ունին վառ վառ,
 «Քոյրս սպասում է զարդով ճոխապանծ.
 «Միայն ես եմ որ ծեծում եմ ողորմ,
 «Փախչում է ինձնից ցնորքն անուշիկ.
 «Ես այս պատերից թռչելով այն կողմ՝
 «Մի կործանում եմ տեսնում մեզ մօտիկ.

«Տեսնում եմ, ահա, մի ջահ է վառուում,
 «Բայց այդ ջահը չէ Հիւմէնի ձեռին.
 «Տեսնում եմ, մինչեւ ամպերն է հասնում
 «Բայց ոչ թէ նման զոհի բոցերին.
 «Տեսնում եմ, զուարթ սարքում են հանդէս,
 «Բայց եւ զգում եմ հոգով նախազգած,
 «Որ մի Աստուած է գալիս դէպի մեզ՝
 «Հանդէսի տեղակ տալ շիւան ու լաց:

«Զե՛ն դնում ականջ իմ բողոքներին,
 «Հեզնում, ծաղրում են վշտերս բոլոր,
 «Մինչ էլ ստիպուած սիրտս դառնազին
 «Անապատ եմ ես տանում մեռաւոր,
 «Խոյս տուած բոլոր երջանիկներից
 «Եւ ուրախների ծիծաղը շարժած.
 «Մինչ ծանր բաժին ստացայ ընդնից,
 «Ով դու սեծ Պիւթեան, խորամանկ աստուած,

«Մնչո՛ւ համար դու ինձ ես կամեցած
 «Ընտրել քարոզիչ քո պատգամների՝
 «Այնպիսի տեղում, ուր, մտքով փակուած,
 «Եման են մարդիկ միայն կոյրերի.
 «Մնչո՛ւ ես տուել ինձ, կարողութիւն
 «Տեսնելու միայն, ո՛չ արգիլելու.
 «Մնչ որ ծածկել ես, է իրողութիւն,
 «Գուշակած բաներս՝ հանդէս են գալու:

«Արժէ՛ բաց անել քողն ա՛յն ժամանակ,
 «Երբ մօտ է արդէն սարսափն սհաւոր.

«Կեա՛նք—մոլորութիւնն է տալիս մենակ,
 «Դիտութիւնը՝ մա՛հ—մարդկեանց ըտրը»
 «Վերցրո՛ւ, ո՛հ, վերցրո՛ւ դու պայծառութեան
 Տխրութիւնն աչքիցս... արիւն եմ տեսնում»
 «Ջարտութիւն է քո ճշմարտութեան
 «Լինել հողեղէն անօթն աշխարհում»

«Տո՛ւր ինձ առաջուայ կուրութիւնս կրկին
 «Եւ խաւարամ իտ հոգիս խնդալի»
 «Լոեցին երգերն իմ զուարթագին,
 «Հենց որ հոչակողն եղայ ԲՈ ձայնի,
 «Դու ապագայի դարձրիր ինձ տէր,
 «Սակայն խլեցիր ինձնից իմ ներկան»
 «Մոլեցիր կեանքիս դու զուարթ ժամեր—
 «Կեղծ է քո պարգեւն, յե՛տ վերցուր նրան»

«Երբեք հարսնութեան չտեսան պսակ
 «Իմ մատաղ գլխի հերքն անուշաբոյր՝
 «Այն օրից, երբ ես կեանքս բովանդակ
 «Ծուէր բերեցի բազնիդ մօտ տխուր»
 «Արտասունքով անցաւ իմ պատանութիւնն,
 «Ես ճանաչեցի միայն վիշտ ու ցաւ,
 «Մինչ իմ իննների կրած նեղութիւնն
 «Զգայուն սրտիս խորերը հասաւ»

«Տեսնում եմ շուրջս խաղեր ու խնդում,
 «Տեսնում եմ աղջկերք եւ ողջ պատանիք
 «Ապրում, սիրում են եւ զուարճանում,
 «Մինչ հեծում է իմ սիրտն ապերջանիկ»
 «Էլ ինչո՛ւ զարունն ինձ պիտի ժպտի
 «Շքեղ զարդարած բնութեան ծոցում»
 «Ո՛վ կը ճաշակէ վայելքը կեանքի,
 «Երբ որ այդ կեանքի խորն է թափանցում»

«Ի՛նչքան երջանի՛կ է Պոլիքսենէն
 «Հարբած իր սրտի քաղցր ցնորքից,
 «Որ սպասում է փառել հարսնօրէն
 «Ամենից քաջին յոյն դիցազններից»

«Հպարտութիւնից կուրծքն ուռած այլ ես
«Զգացած բերկրանքն հագիւ է զսպում:
«Ո՛վ երկնայիններ, մինչեւ իսկ ե՛ւ ձեզ
«Ծրանի չի՛ տալ նա իր երագում:

«Ծ՛ս էլ եմ տեսել այդ քաջ դիւցազնին,
«Որին ընտրում է սիրտս տենչալից.
«Աղերս է փայլում իր գողտր աչերին՝
«Շոր ոգետրուած սիրոյ կրակից:
«Ծրնէ՛կ այդպիսի ամուսնու հետ ես
«Քաշուէի ընիկ յարկս հայրենի.
«Այն ինչ Ստիւքսեան մի ստուեր կարծես
«Մտնում է մեր մէջ նման գիշերի:

«Ա՛խ, Պրոսէրպինա՛, ինձ ես ուղարկում
«Դու էլ քո բոլոր տոգոյն ստուերներ,
«Որ ամենուրեք ինձ են հետեւում
«Ուր ման եմ գալիս կամ շրջում անտէր:
«Այդ զարհուրելի դէմքերն հանապազ
«Թունաւորում են դեռ զուարթ խաղերս՝
«Թողնելով խեղճիս սարսափ ու աւեր...
«Էլ զուարթութիւն տեսնելու չեմ ես:

«Տեսնում եմ, մահուան սուրբ շողշողում,
«Կրակ է ցայտում սպանչի աչքից.
«Ոչ աջ, ոչ արեակ չեմ կարողանում
«Խոյս տալ, ազատուել դառն տանջանքից.
«Զեմկարող նոյնիսկ դէս ու դէն նայել.
«Կամայ ակամայ ստիպուած եմ ես
«Ծակատագրիս կամքը կատարել
«Օտար աշխարհում ողբալով օրերս:—

Եւ մինչ լալագին խօսում է նա դեռ,
Լսում են հեռուանց ճայներ շփոթի.
Ցածարի դռնից մահ, արի՛ւն, աւեր
Սփռում է երէց որդին Թետիսի:
Հեռ թափ է տալիս իժեր ու օձեր,
Աստուածներն անգամ փախուստ են տալիս,
Մինչ ամպ ու որոտ, փայլակ ու կայծեր
Խեղճ իլիոնի վրայ են գալիս:

Գերմ. Թարգմ. Մ. Վ. Մ.